

**Չարց** Ի՞նչ ձևով է իրականացվում հայտի քննարկումը՝ լսումների կարգով, հայտի մերժման հիմքի առկայության դեպքում կամ հայտատուի պահանջով իրականացվող հայտի քննարկման դեպքում:

### **Պատասխան**

1. Լսումների կարգով հայտի քննարկումը կազմակերպում են լիցենզավորող մարմնի կողմից լիազորված անձինք:

2. Չայտը լսումների կարգով քննարկելու կապակցությամբ, սույն օրենքով նախատեսված հայտի քննարկման ժամկետը կարող է երկարաձգվել 7 օրով:

3. Լսումների կարգով հայտի քննարկմանը հրավիրվում է հայտատուն: Չայտի քննարկման մասին հայտատուին պատշաճ ձևով հայտնվում է քննարկումից առնվազն 5 օր առաջ, տեղեկացնելով նրան քննարկման վայրի (հասցեի), ամսաթվի ու ժամի մասին:

4. Լսումների կարգով հայտը քննարկելիս հայտարարվում է, թե ինչ հայտ է քննարկվելու, ովքեր են հրավիրվել քննարկմանը, հայտատուին բացատրվում է նրա իրավունքներն ու պարտականությունները, հրապարակվում է հայտի, ինչպես նաև քննարկվող այլ փաստաթղթերի բովանդակությունը:

Չայտի քննարկմանը հայտատուի չմասնակցելը հիմք է հանդիսանում հայտը չքննարկելու համար, եթե հայտատուն չի խնդրել քննարկումն անցկացնել այլ ժամկետներում: Չայտատուի սույն խնդրանքը կարող է բավարարվել, եթե նա քննարկմանը չի կարող մասնակցել հարգելի պատճառով և եթե քննարկումը հետաձգելիս չեն խախտվի սույն օրենքով նախատեսված հայտերի քննարկման ժամկետները:

5. Չայտատուն իրավունք ունի քննարկմանը մասնակից դարձնել մասնագետի, փորձագետի, աուդիտորի, իրավաբանի կամ թարգմանչի: Չայտատուն եւ (կամ) նրա շահերի պաշտպաններն իրավունք ունեն ելույթներ ունենալ, պատասխանել աշխատանքային խմբի անդամների հարցերին, միջնորդություններ հարուցել, առաջարկություններ կատարել:

6. Չայտերի քննարկումները կատարվում են դռնբաց: Դռնփակ են քննարկվում այն հայտերը, որոնք վերաբերում են պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններին: Չայտատուի պահանջով քննարկումը կարող է կատարվել դռնփակ, եթե հայտի քննարկման ժամանակ բացահայտվելու են առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններ: